ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

6 հունիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

80
(2746)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵԿԵՂԵՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ Է «ԲՌՆՈՒՄ»



Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն թերեւս որոշել է քաղաքական գործունեություն ծավալել, քաղաքական հարցեր քննարկել՝հոգեւորական խնդիրներով զբաղվելուն զուգահեռ: Դրա վառ ապացույցը նաեւ նորաստեղծ «Գավիթ» հարթակի անդրանիկ քննարկումն էր: Բանն այն է, որ այդ քննարկմանը մասնակցել են նաեւ եկեղեցականներ, ազգային, հասարակական, քաղաքական գործիչներ եւ տարբեր ոլորտների պատկառելի այլ ներկայացուցիչներ: Պաշտոնական հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ զեկույցներ, ելույթներ են եղել, եւ որոշում է կայացվել շարունակել այդպիսի քննարկումները: Իհարկե, կարեւոր է, որ Հայաստանի, Արցախի շուրջ ծավալվող գործընթացներին մասնակից լինեն մեծ թվով անձինք, ուժեր, սակայն այստեղ թերեւս ամենաուշագրավն այդ ամենին հենց կաթողիկոսի մասնակցությունն է, որը միշտ է խոսել եկեղեցին քաղաքականությունից անջատ պահելու պատրաստակամության եւ կարեւորության մասին: Հունիսի 11-ին կգումարվի միաբանական հավաք: Թեմերից Մայր Աթոռ է ժամանել մոտ 7 տասնյակ հոգեւորական: Նրանք ունեն խտացված դժգոհություն Նիկոլ Փաշինյանի վարած քաղաքականությունից, որի հետեւանքով Հայաստանի եւ Արցախի քարտեզները փոքրանում են:

ՀՀ հաշվեքննիչ պալատը 2022 թվականի ընթացքում խախտումներ է արձանագրել Հակոբ Սիմիդյանի գլխավորած՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում անտառօգտագործման գործընթացի նկատմամբ կատարողականի հաշվեքննությամբ արձանագրվել է, որ, օրինակ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կնքված թվով 9 վարձակալության պայմանագրերում պետական սեփականություն հանդիսացող անտառների վարձավճարների՝ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափը չպահպանելու արդյունքում, հաշվեքննողների հաշվարկներով, անտառտնտեսության թվով 5 մասնաճյուղերում ընդհանուր վարձակալված 36,7 հա անտառային հողատարածքներից 2019-2020թթ. ժամանակահատվածում 14,086.5 հազ. դրամի վարձավճարներ չեն գանձվել: Մյուս կողմից՝ բացակայում են ՊՈԱԿ-ի «Մեկ անձից գնում» գնման ընթացակարգի համաձայն կատարված գործողությունների եւ դրանց հիմքերի վերաբերյալ գնումների ոլորտի՝ օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային փաստաթղթերը: 2019-2020թթ. ընթացքում փաստացի մատուցվել են ծառայություններ, որոնց գործընթացները պետք է կատարվեին՝ գնումների վերաբերյալ իրավական նորմատիվ ակտերով սահմանված կարգով: Իսկ թե ինչ պատիժ է սպասվում նախարարին, դեռ դժվար է ասել:

Թմրանյութերի թեման հետապնդում է Նիկոլ Փաշինյանի իշխանությանը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ օրերս թմրանյութի մի նոր սկանդալ է արձանագրվել արդեն Երեւանի ճանապարհին: Այս առիթով իրավապահ համակարգում խառնված են: Պարզվում է՝ օրերս ուշագրավ բացահայտում է եղել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ օրերս իրավապահները Աբովյան քաղաքի ճանապարհին ձերբակալել են ՀՀ ուժային կառույցներից մեկում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող անձի որդու, որի մեքենայի մեջ եղել է մոտ 240 պարկ թմրանյութ: Վերջինս, ըստ լուրերի, թմրանյութը տեղափոխում էր Երեւան: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ պաշտոնատար անձի որդուն կալանավորել են: Իսկ թե ով է պաշտոնատար անձը, առայժմ չենք հրապարակում, որպեսզի ընթացող նախաքննությանը չվնասենք, եւ ողջ շղթան բացահայտվի: Առաջիկայում նաեւ պաշտոնյայի ու նրա որդու անունը կհանրայնացնենք:

Նիկոլ Փաշինյանը Հայաստանում ժողովրդավարության շղարշ ստեղծելու համար պարբերաբար հանդիպումներ է ունենում արտախորհրդարանական ուժերի հետ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դրա մաս կազմող արտախորհրդարանական ուժերը դժգոհ են այդ ֆորմատից, ասում են, որ հանդիպումները ձեւական բնույթ են կրում. Փաշինյանը հանդիպում, լսում է իրենց, լուսանկարվում, բայց իրականում հանդիպումները ոչինչ չեն փոխում, առաջարկներն էլ օդում են մնում: Իրականում Փաշինյանն իրենց ասածները հաշվի չի առնում, անում է այն, ինչ ուզում է: Արտախորհրդարանական ուժերի մեծ մասն այս պատճառով այլեւս չի ցանկանում մասնակցել այդ հանդիպումներին, քանի որ գիտակցում են՝ այդ հանդիպումները զուտ ձեւական բնույթ ունեն. միայն Փաշինյանն է այս հանդիպումների միջոցով ժողովրդավարության ֆոն ստեղծում, հանդիպումները ուրիշ ոչ մեկին ոչինչ չեն տալիս:

ՍԱՀՄԱՆՆԵՐ

ԳԾ ՆԱԽԿԻՆ ՊԵՏԸ՝ ՔԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը Արցախի եւ Հայաստանի շուրջ տեղի ունեցող զարգացումների շուրջ զրուցել է ՀՈՒ ԳԾ նախկին պետ Մովսես Հակոբյանի հետ:

-Պարոն Հակոբյան, Նիկոլ Փաշինյանը վերջին ասուլիսի ժամանակ հայտարարեց, որ եթե Հայաստանը եւ Ադրբեջանը համաձայնության գան փաստաթղթի շուրջ, եւ Հայաստանը ճանաչի Արցախի տարածքային ամբողջականությունը, դա ներառում է նաեւ Արցախը եւ անկլավները: Ի՞նչ կասեք:

-Դա քաղաքական գործընթաց է. ինչի՞ եք զարմանում այդ հայտարարությունից, բա 2,5 տարի առաջ փաստաթուղթ է ստորագրել Փաշինյանը, հիմա ինչի՞ եք զարմանում: Ես բազմիցս ասել եմ, թե նոյեմբերի 9-ի փաստաթուղթն իրենից ինչ է ներկայացնում:

-Նոյեմբերի 9-ի փաստաթղթում խոսք չկա անկլավների մասին, բայց Փաշինյանն ասաց, որ անկլավները եւս հանձնվելու են:

-Ի՞նչ է նշանակում՝ անկլավները նշված չեն. անկլավներում մի հատ չինարի ծառ կա, դա էլ նշված չէ: Ես դա հասկացել եմ 2,5 տարի առաջ՝նոյեմբերի 10-ին, որ տարբեր հատվածներում խնդիրներ ենք ունենալու:

-Այսինքն՝ անկլավների հանձնումն է՞լ է նոյեմբերի 9-ի փաստաթղթից բխում:

-Այո՛:

-Ենթադրենք՝ անկլավները հանձնեցինք, Արցախը հանձնեցինք, հետո ի՞նչ է լինելու:

-Հետո պետք է մտածենք՝ Հայաստանի տարածքային ամբողջականությունը կարողանում ենք պահպանել, թե ոչ, որովհետեւ այնտեղ կա նաեւ 9-րդ կետ:

-9-րդ կետն ի՞նչ է ենթադրում:

-Ճանապարհով անարգել երթեւեկություն Նախիջեւանի եւ Ադրբեջանի հարավային շրջանների միջեւ:

-Այսինքն՝ հաջորդը Սյունիքով միջանցքն է լինելու:

-Միջանցք բառը փաստաթղթում գրված չէ: Միջանցք չի լինելու, լինելու է ճանապարհ, որով ադրբեջանցիներն անարգել երթեւեկելու են:

-Արցախն ու անկլավները հանձնելուց հետո իշխանությունների ցանկալի խաղաղությունը կհաստատվի՞, Ադրբեջանը կբավարարվի՞ այդքանով:

-Ո՛չ:

-Հաջորդը ի՞նչ պահանջներ են ներկայացնելու Հայաստանին:

-Դա կարող եք հարցնել Էրդողանից կամ Ալիեւից:

-Պարոն Հակոբյան, Նիկոլ Փաշինյանը շաբաթ օրը Թուրքիայում մասնակցում էր այդ երկրի նախագահի երդմնակալության արարողությանը: Ինչպես լուսանկարներից է երեւում, ջերմ զրուցում էր Ալիեւի եւ Էրդողանի հետ. ի՞նչ կասեք այս մասին:

-Անձնական հարցեր չեմ մեկնաբանում:

-Իսկ այս իրավիճակում, ի՞նչ եք կարծում, բավարար ռեսուրսներ ունե՞նք ռազմական եւ արտաքին քաղաքական դաշտում հակառակորդին դիմակայելու համար:

-Ռեսուրս ցանկության դեպքում միշտ էլ կարելի է գտնել:

Զրուցեց ԶՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼԱՐՎԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունները հաստատվում են. ինչպես գրել էինք, ՔՊ-ականներն անհամբեր սպասում էին Արարատ Միրզոյանի՝ խորհրդարան գալուն, որպեսզի նրանից «վրեժ» լուծեն այն բանի համար, որ վերջինս օրենսդիրից գործադիր տեղափոխվելուց հետո սառեցրել է հարաբերությունները խմբակցության իր թիմակիցների հետ: Իշխանական մեր աղբյուրները փոխանցեցին, որ Արարատ Միրզոյանի եւ ՔՊ-ականների հանդիպումն ԱԺ-ում բավականին լարված է անցել:

Նախ՝ «Ժողովուրդ» օրաթերթը ֆիքսեց, որ ԱԺ-ում Միրզոյանին դիմավորող չկար, ինչպես մյուս նախարարների դեպքում է լինում:

Իշխանական թեւի պատգամավորները շատ սառն են դիմավորել Միրզոյանին, անգամ խմբակցությունում Միրզոյանի մտերիմները չեն մոտեցել նրան, ջերմ վերաբերմունք ցույց չեն տվել, շատ սառն են եղել նրա հետ: Արարատ Միրզոյանն էլ իր հերթին է թիմակիցների հետ սառը եղել, առանձին զրույցներ չի ունեցել նրանցից որեւէ մեկի հետ: ՔՊ-ականներն այսպիսով համարում են, որ Միրզոյանին տվել են արժանի պատասխան՝ նրա արհամարհական վերաբերմունքի դիմաց:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը պարբերաբար «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ի պոլիկլինիկայի աշխատակիցներից, ինչպես նաեւ այնտեղ սպասարկվող քաղաքացիներից դժգոհություններ է ստանում՝ պոլիկլինիկայի տնօրեն Հեղինե Պետրոսյանի հետ կապված: Բանն այն է, որ, ըստ մեզ հասած դժգոհությունների, վերջինս թե՛ իր աշխատողների, թե՛ քաղաքացիների հետ վարվում է այնպես, ինչպես իր սիրտն է կամենում. կոպիտ եւ արհամարհական կերպով է խոսում նրանց հետ: Աշխատակիցներից մեզ հետ զրույցում պատմեցին, որ երբ անձնական որեւէ հարցով դիմում են տնօրենին, վերջինս անտեղի քաշքշուկի մեջ է քցում իրենց, որեւէ հարցում չի զիջում աշխատակիցներին: Բացի սա, Հեղինե Պետրոսյանն իր աշխատակիցներին ուղարկում է Ամիրյան փողոց, որպես շրջիկ սպասարկելու օտարերկրյա քաղաքացիներին, ինչի համար հավելյալ վճար չեն ստանում աշխատողները: Ավելին՝ աշխատակիցները ամսական ժամանակին բոնուսներ են ստացել, ինչը եւս «կտրել է» Հեղինե Պետրոսյանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ բուժաշխատողների մեծ մասը չի ցանկանում աշխատել տնօրենի հետ, դիմումներ են գրում ու հեռանում: Վերջերս հեռացել է պոլիկլինիկայի մանկաբույժը, հիմա նոր մանկաբույժ չեն կարողանում գտնել: «Ժողովուրդ» օրաթերթը գրեթե նույն բովանդակությամբ դժգոհություններ է ստանում նաեւ քաղաքացիներից, որոնք պատմում են, որ երբ դիմում են Հեղինե Պետրոսյանին, արհամարհական վերաբերմունքի են արժանանում: Մեզ հասած տեղեկություններով՝ չնայած այս դժգոհություններին՝ վերջինիս դեմ չեն համարձակվում բացահայտ բողոքներ ներկայացնել, քանի որ նա Առողջապահության նախարարությունում «հովանավորյալ» ունի՝ առողջապահության փոխնախարար Արտակ Ջումանյանը: Այս հարցերի շուրջ պարզաբանումներ ստանալու համար դիմեցինք անձամբ Հեղինե Պետրոսյանին: Փորձեցինք պարզաբանում ստանալ նաեւ Արտակ Ջումանյանից՝ հասկանալու՝ արդյոք նա է Հեղինե Պետրոսյանի հովանավորյալը, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՉԿԱ

"Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման համար կոնկրետ քարտեզի շուրջ վերջնական պայմանավորվածություն չկա, սակայն, օրինակ, 1975թ-ի քարտեզը հիմք վերցնելը Հայաստանի համար ընդունելի լուծում է»,- ասաց ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը «ՀՀ 2022թ. պետական բյուջեի կատարման մասին» տարեկան հաշվետվության նախնական քննարկումների ժամանակ՝ անդրադառնալով պատգամավորների հարցերին:

«Թե որ քարտեզով պետք է իրականացվեն սահմանազատման աշխատանքները, դեռեւս վերջնական պայմանավորվածություն չկա, բայց կա հանձնառություն այդ աշխատանքներն իրականացնել՝ Ալմաթիի հռչակագրին համահունչ: Անցյալ տարվա հոկտեմբերի 6-ին Պրահայում սրա շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերվել. որ քարտեզով՝ պայմանավորվածություն չկա»,-ասաց Միրզոյանը:

Նա հավելեց՝ որքանով որ իրեն է հայտնի, Քիշնեւում վերջին քննարկման ժամանակ Ադրբեջանի նախագահը առարկություն չի հայտնել 1975 թվականի քարտեզի վերաբերյալ:

«Խոսքն այն քարտեզի մասին է, որի շուրջ ըմբռնում ու պատրաստակամություն կա շարունակել աշխատանքները ողջ միջազգային հանրության կողմից եւ ՀՀ-ի կողմից: Մենք կարծում ենք, որ 1975 թ. քարտեզով ճանաչել միմյանց տարածքային ամբողջականությունը եւ այդ հիմքով սկսել սահմանազատման աշխատանքները ընդունելի լուծում է Հայաստանի Հանրապետության համար, սակայն կոնկրետ քարտեզի համար վերջնական համաձայնություն չկա»,- եզրափակեց արտգործնախարարը:

ԶԱՐԳԱՑՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանն Ազգային տոնի՝ Իտալիայի Հանրապետության օրվա կապակցությամբ ընդունել է արտակարգ եւ լիազոր դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոյին:

Ողջունելով հյուրին՝ նախագահը շնորհավորել է տոնի առթիվ եւ հաջողություններ մաղթել Իտալիայի ժողովրդին եւ ղեկավարությանը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Իտալիայի միջեւ համագործակցության հետագա զարգացման օրակարգային հարցեր: Անդրադարձ է կատարվել հայ-իտալական առեւտրատնտեսական փոխգործակցության խթանման հնարավորություններին, ինչի կապակցությամբ երկուստեք դրական է գնահատվել երկու երկրների միջեւ ապրանքաշրջանառության, ինչպես նաեւ դեպի Իտալիա ուղիղ թռիչքների նշանակալի աճը:

Կարեւորվել է հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման գործում հայ-իտալական համագործակցությունը, մասնավորապես՝ իտալական լավագույն փորձի կիրառումը դատահիրավական ոլորտի բարեփոխումներում:

Զրույցի ընթացքում մտքեր են փոխանակվել տարածաշրջանային իրողությունների վերաբերյալ: Հանրապետության նախագահն ընդգծել է, որ Հայաստանը հավատարիմ է հարեւանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատման եւ հարավկովկասյան տարածաշրջանում կայուն ու հարատեւ խաղաղության հասնելու իր դիրքորոշմանը:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

Վարչական շրջաններում կատարվում է փողոցների շուրջ 23 կմ 740 մ հատվածի միջին նորոգում: Այս մասին նշվել է հունիսի 5-ին՝ Երեւանի քաղաքապետարանում հերթական գործակարգավարական խորհրդակցության ժամանակ:

Փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը, անդրադառնալով աշխատանքների որակին, շեշտել է տեխնիկական հսկողության նշանակությունն ու ընդգծել, որ այն պետք է ձեւական չլինի. «Կատարված աշխատանքների վերաբերյալ բազմիցս եղել են բողոքներ, որ բավարար որակով չեն իրականացվում: Այստեղ մենք ունենք տեխնիկական հսկողության կառույցը, որը պետք է սկսի իրապես աշխատել:

Պետք է հասկանանք, թե քանի տեխհսկող է պատժվել իր գործը չանելու համար: Նաեւ գուցե ուսումնասիրենք կառավարության փորձը՝ աշխատանքների տեխնիկական հսկողության լոտերը մեծացնելու առումով, եւ, համապատասխանաբար, ավելի խոշոր խաղացողներին մասնակցելու հնարավորություն տանք: Տեխնիկական հսկողությունը պետք է չկրի ձեւական բնույթ: Եթե այդպես է, ավելի լավ է չունենանք: Պետք է գտնել բովանդակային ձեւը, որպեսզի տեխհսկողությունը դառնա իրական գործիք, եւ խստորեն հետեւենք որակին»,- ընդգծել է փոխքաղաքապետը:

ԹԵԹԵՎԱՑՆԵԼՈՎ ԽՑԱՆՈՒՄՆԵՐԸ

Երեւանի ավագանու «Լույս» խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյանը հանդես է եկել Երեւանի Մյասնիկյան պողոտայում խցանումները թեթեւացնելու առաջարկով:

Ըստ առաջարկի՝ Մյասնիկյան պողոտայում երթեւեկությունը պետք է կարգավորվի ռեվերսային գծերով, որոնք կմեծացնեն պողոտայի թողունակությունը օրվա տվյալ ժամին՝ միեւնույն ժամանակ չխցանելով հակառակ կողմը:

«Ես առաջարկում եմ նոր լուծում Մյասնիկյան պողոտայի ծանրաբեռնվածությունը թոթափելու համար: Դա ժամանակակից ռեվերսային համակարգն է: Սա նշանակում է, որ երբ դուք Ավան եւ Նոր Նորք վարչական շրջաններից կիջնեք դեպի Հերացի փողոց, երեքի փոխարեն՝ կունենաք 4 կամ 5 երթեւեկելի գիծ: Ինչպե՞ս: Տեղակայված կլինեն լուսացույցներ, որոնք ձեզ ցույց կտան, որ առավոտյան ժամերին վերեւից իջնելու պարագայում դուք ունեք հավելյալ մեկ կամ երկու գիծ: Նույնը երեկոյան ժամերին, երբ դուք Հերացի փողոցից կփորձեք բարձրանալ դեպի Մյասնիկյան պողոտա, ապա բարձրացող երեք գծերի փոխարեն՝ կունենաք 4-ը կամ 5-ը, որն այդ պահին չի ունենա վերեւից իջնող ուղղությունը»,- մանրամասնել է Խաժակյանը:

ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆԸ

ՔՊ-ԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

Ազգային Ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Նարեկ Գրիգորյանը ԱԺ-ում հազվադեպ է ելույթներ ունենում կամ օրինագծեր հեղինակում, փոխարենը պարբերաբար սկանդալների մեջ է հայտնվում:

Հանրությունը Նարեկ Գրիգորյանին ճանաչեց Ազգային Ժողովում մի քանի ուշագրավ հայտարարություններից ու ցուցաբերած պահվածքից հետո, մասնավորապես՝ երբ «սեպտեմբերի փոխարեն» ասաց «սեկտեմբեր», կամ երբ հայտարարեց, որ օրենքի նախագիծ է բերելու ԱԺ, որպեսզի կաթը թանկանա:

Վերջինս նաեւ խորհրդարանում պատգամավորների միջեւ տեղի ունեցած ծեծկռտուքների մեծ մասի ակտիվ մասնակիցներից է:

Նրա մասնակցությամբ ամենատպավորիչ սկանդալը թերեւս այն է, որ նա 2022թ.-ին ԱԺ ամբիոնից գլուխ էր գովել, թե 44-օրյա պատերազմի օրերին եղել է ինչ-որ «Գեղարքունիք» ջոկատի հրամանատար, եւ, իբր, իր մոտ են բերել ԱԺ փոխնախագահ Իշխան Սաղաթելյանի հորը՝ Վաչիկ Սաղաթելյանին, որն էլ, իբր, խնդրել է Նարեկ Գրիգորյանին, թե հիվանդ է, թողնեն՝ գնա տուն, ինչից հետո ԱԺ-ում ծեծկռտուք էր սկսվել:

ՊՆ-ից հերքել էին պատգամավորի այս հայտարարությունը՝ պարզաբանելով, որ Նարեկ Գրիգորյանի գլխավորած «Գեղարքունիք» ջոկատն առաջնագծում չի եղել եւ մարտական որեւէ առաջադրանք չի կատարել:

Նկատենք նաեւ, որ պատգամավորը խորհրդարանում հաճախ աչքի է ընկնում բռնության կադրերում:

Նարեկ Գրիգորյանը խորհրդարանի դահլիճում ընդդիմության շատ պատգամավորների ելույթների ժամանակ ռեպլիկներ է բաց թողնում, վեճ հրահրում, իսկ իր թիմակիցներն էլ Գրիգորյանին կա՛մ հանդարտեցնում են, կա՛մ դահլիճից դուրս հանում: Այդկերպ նա հավանաբար փորձում է արդարացնել իր գոյությունը խորհրդարանում եւ բարձրանալ իշխանության աչքին:

Ուսումնասիրելով Գրիգորյանի կենսագրությունը՝ «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ նա մինչեւ 2018 թվականը որեւէ աչքի ընկնող գործունեություն չի ծավալել, այն էլ՝ քաղաքական դաշտում: Ծնվել է Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղում, ավարտել է Երեւանի Հյուսիսային համալսարանը:

Նա Նորատուսի հայտնի ձկնավաճառներից է եղել, ավելին՝ իր ծննդավայր Գեղարքունիքում հայտնի է որպես «ձկնգող», քանի որ տարիներ շարունակ՝ անգամ արգելված սեզոնին, զբաղվել է ձկի որսով՝ ձգնգողությամբ: Նրան այդ մասին ԱԺ ամբիոնից հիշեցրել էր նաեւ դաշնակցական Իշխան Սաղաթելյանը՝ «ձկնգող» անվանելով:

2016-2018թթ.-ին Նիկոլ Փաշինյանի, Արամ Սարգսյանի եւ Էդմոն Մարուքյանի «Ելք» դաշինքի կողմից Նարեկ Գրիգորյանը առաջադրվել եւ ընտրվել է Նորատուս համայնքի ավագանու անդամ: Ապա ավագանու անդամ լինելով՝ 2018թ. -ին Նիկոլ Փաշինյանը նրան միանգամից նշանակել է Գեղարքունիքի մարզպետի տեղակալ մինչեւ 2020 թվականը: Ուշագրավ է, որ Նարեկ Գրիգորյանը փոխմարզպետ է նշանակվել՝ իր դաշնակցական աներ Արտաշես Նիկոյանի փոխարեն:

Հիշեցնենք, որ 2018թ.-ին Գեղարքունիքի փոխմարզպետ Նարեկ Գրիգորյանը «Իմ քայլը» դաշինքի կողմից առաջադրվել էր որպես պատգամավորի թեկնածու, սակայն չէր ընտրվել եւ շարունակել է գործունեությունը որպես փոխմարզպետ:

Իսկ 2020թ. դեկտեմբերի 4-ին արդեն դարձել է ԱԺ պատգամավոր՝ «Իմ քայլը» դաշինքի ընտրական ցուցակով:

Ուսումնասիրելով Գիրգորյանի ոչ պաշտոնական լուսանկարները՝ պարզ է դառնում, որ պատգամավորը բավականին «խեղճուկրակ» կյանքից միանգամից փոխել է ապրելակերպն ու հագուկապը, նաեւ քաշն է ավելացրել:

Նարեկ Գրիգորյանը նաեւ ՔՊ-ական այն մեծաթիվ պատգամավորների շարքին է դասվում, որոնք տարբեր պատճառաբանություններով չեն ծառայել Հայաստանի զինված ուժերում: Ըստ «Հետք»-ի՝ ազատման հիմքը եղել է ինքնավնասումը: Ընդ որում՝ ինքնավնասման հետեւանքով ունեցած սպիները ակնհայտորեն երեւում են նաեւ Գիրգորյանի կողմից հրապարակված անձնական լուսանկարներում:

Այսպիսով, ամփոփելով Նարեկ Գրիգորյանի քաղաքական գործունեությունը՝ կարող ենք արձանագրել, որ նրա բախտը բերել է, որ 2015 թվականին անդամագրվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը եւ ձկնգողից դարձել ԱԺ պատգամավոր:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ
ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

ՓՈԽՆԱԽԱԳԱՀԸ՝ ԱԿՅԻՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հունիսի 6-ին՝ ժամը 16:00-ին, Վրաստանում Հայաստանի դեսպանատան դիմաց ակցիա կկազմակերպվի՝ ի աջակցություն Արցախի: Այս մասին տեղեկանում ենք Վրաստանում հայ համայնքի տարածած հաղորդագրությունից:

«Հավաքվում ենք Վրաստանում Հայաստանի դեսպանատան դիմաց՝ Տետելաշվիլի 4 հասցեում»,- ասվում է հաղորդագրության մեջ:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Դավիթ Բաբայանը, անդրադառնալով կազմակերպվելիք վերոհիշյալ ակցիային, ասաց, որ այս ամենի կարեւորությունը այն է, որ պետք է բոլորը տեսնեն, թե ինչ նշանակություն ունի Արցախը հայ ժողովրդի համար, եւ ինչքան ցույց տանք, որ Արցախը սրբություն է, այնքան դա կազդի աշխարհի վրա:

- Ընդհանրապես, Արցախի նկատմամբ հետաքրքրվածությունն ու այն, որ Արցախը սրբության նման է հայերի համար, կարող է իր ազդեցությունը ունենալ աշխարհաքաղաքական զարգացումների վրա : Հետեւաբար Արցախը , միշտ ասել ենք, որ եղել ու պետք է մնա գլխավոր, գերագույն արժեքներից մեկը հայության համար: Եվ մենք տեսնում ենք, որ սփյուռքում իսկապես հատուկ ընդգծված վերաբերմունք կա Արցախի նկատմամբ, եւ այն պահպանվում է: Տեսնենք, նայած ինչ ձեւով է այդ ամենը իրականացվում, բայց այն, որ Արցախը պետք է լինի արժեք բոլորի համար, սա միանշանակ է: Եթե այդպես չլինի, եւ մենք կորցնենք Արցախը, կորցնելու ենք ամեն ինչ:

Ուղղակի պետք է բոլորը տեսնեն, թե ինչ կարեւորություն ունի Արցախը հայ ժողովրդի համար: Օրինակ՝ տեսնում եք՝ ինչ մեծ հանրահավաք է տեղի ունեցել Բելգրադում՝ի սատարում Կոսովոյի. դա չի կարող, չէ՞, իր ազդեցությունը չունենալ:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՎԱՐՈՒՅԹ

ԿԵՂԾ ԱՀԱՋԱՆԳԵՐ՝ ԿԱԼԱՆԱՎՈՐԻՑ

«Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի կալանավոր Գ.Բ.-ն 2022 թվականի հոկտեմբերին, նոյեմբերին, դեկտեմբերին, ինչպես նաեւ 2023 թվականի հունվարին զանգահարել է պետական գերատեսչություններ եւ ռումբի տեղադրման մասին ահազանգեր հնչեցրել:



Մասնավորապես՝ Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Գ.Բ.-ն 2022 թվականի հոկտեմբերի 7-ին՝ժամը 11:15-ի սահմաններում, քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչություն եւ հայտնել, որ իր ցուցումով Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի եւ Լոռու մարզի դատախազության շենքերի նկուղներում տեղադրվել է ռումբ: Դատարանի եւ դատախազության շենքերում իրականացված ստուգողական գործողությունների արդյունքում ռումբ կամ պայթուցիկ սարքեր չեն հայտնաբերվել:

Մեկ այլ դեպքում 2022 թվականի հոկտեմբերի 7-ին զանգահարել է Լոռու մարզի փրկարար ծառայություն եւ հայտնել, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լ.Ա.-ի եւ Լոռու մարզի դատախազ Կ.Գ.-ի աշխատասենյակներում ռումբ է տեղադրված: Կատարված ստուգողական գործողությունների արդյունքում ռումբ կամ պայթուցիկ սարքեր չեն հայտնաբերվել:

Դրանից բացի՝ 2022 թվականի նոյեմբերի 2-ին եւ 16-ին, Գ.Բ.-ն զանգահարել է Լոռու մարզի փրկարար ծառայություն եւ տեղեկացրել, որ «Վանաձորի բժշկական կենտրոն»-ում եւ Քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Տ.Թ.-ի աշխատասենյակում տեղադրված է ռումբ եւ պայթուցիկ սարք: Տեղեկությունը ստուգվել է, եւ պարզվել, որ ահազանգն իրականությանը չի համապատասխանում:

2022 թվականի դեկտեմբերի 2-ին, 21-ին, եւ 30-ին Գ.Բ.-ն կրկին զանգահարել է Լոռու մարզի փրկարար ծառայություն, Ներքին գործերի նախարարության ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն եւ Արդարադատության նախարարություն ու տեղեկացրել, որ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Ա.-ի աշխատասենյակում, Երեւան քաղաքի դատախազության եւ Արդարադատության նախարարության շենքերում ռումբ կա տեղադրված: Ստուգողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ Գ.Բ.-ի հայտնած տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանում:

2023 թվականի հունվարի 6-ին Գ.Բ.-ն զանգահարել է ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզի օպերատիվ կառավարման կենտրոն եւ հայտնել, որ ԱԱԾ Լոռու մարզային վարչության շենքում ռումբ կա տեղադրված: Ձեռնարկված ստուգողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ տեղեկությունն իրականությանը չի համապատասխանում:

2023 թվականի մայիսի 26-ին հսկող դատախազի կողմից Գ.Բ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 01.07.2022 թվականին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով (ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ հայտնելը) (չորս դրվագ) եւ 314-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ հայտնելը, որը անզգուշությամբ առաջացրել է հիմնարկի գործունեության կազմալուծում կամ ծանր հետեւանք) (վեց դրվագ):

Դատախազը 2023 թվականի հունիսի 2-ին հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱՅՈՒՄ

Ուշագրավ իրավիճակ է ստեղծվել «Գլորիա կարի ֆաբրիկա» ընկերության շուրջ:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մեղադրյալի աթոռին է հայտնվել Նաիրա Գրիգորյանը: Վերջինիս մեղադրանք է առաջադրվել, որ նա, «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության տնօրենի՝ իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ հրամանով ազատվելով նույն ընկերության կարող բանվորուհու աշխատանքից, այդ հանգամանքով պայմանավորված՝ 2022 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներից մինչեւ 2023 թվականի փետրվարի 11-ն ընկած ժամանակահատվածում, պարբերաբար նվաստացնելով տնօրենի պատիվն ու արժանապատվությունը, օրվա տարբեր ժամերին կատարելով հեռախոսազանգեր, վերջինիս հասցեին հնչեցրել է պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վիրավորական, հայհոյախառն արտահայտություններ, նրան է ուղարկել նույնաբովանդակ SMS կարճ հաղորդագրություններ, ինչպես նաեւ այցելելով տնօրենի բնակության վայր՝կենցաղային աղբ է լցրել վերջինիս բնակարանի մուտքի դռան մոտ:

Հիշեցնենք, որ մոտ երկու տարի առաջ Երեւանում սպանեցին «Գլորիա կարի ֆաբրիկա»-ի գլխավոր տնօրեն Բագրատիոն Դարբինյանի դստերը. գործը դատարանում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՓՈԽՎԵՑ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Վերաքննիչ դատարանը որոշել է Գայանե Մարտիրոսյանի խափանման միջոցը փոխել տնային կալանքի:

Հիշեցնենք, որ, նախնական որոշմամբ, Գայանե Մարտիրոսյանը մեկ ամսով էր կալանավորվել:

Փաստաբան Հովսեփ Սարգսյանը մեզ հետ զրույցում հաստատեց մեր տեղեկությունը՝ նշելով, որ որոշումը կայացվել է նիստից ժամեր առաջ, եւ ասաց, որ դա իրենց չի բավարարում:

Հիշեցնենք՝ Գայանե Մարտիրոսյանը մեղադրվում է վարչապետի որդուն՝Աշոտ Փաշինյանին առեւանգելու համար: Քննչական կոմիտեի հրապարակած տեղեկության համաձայն՝ ՆԳՆ ոստիկանությունում Աշոտ Փաշինյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ու պատմել, որ մայիսի 17-ին փողոցում՝ Վերաքննիչ դատարանի դիմաց, իրեն են մոտեցել զոհված զինծառայողների ծնողներ: Նրանցից մի կին ներկայացել է որպես զոհված զինծառայողի մայր, առաջարկել է նստել մոտակայքում կայանված իր ավտոմեքենան, որպեսզի կարողանան հանգիստ զրուցել: Երբ նստել է մեքենան, նշված կինն իր համար անսպասելի վարել է այն՝ ասելով, թե փոքր-ինչ հեռու կգնան, որպեսզի իրենց չխանգարեն:

«Ավտոմեքենայում նշված կինը սկսել է խոսել 2020թ. պատերազմից, տարածքային ու մարդկային կորուստներից: Տեսնելով, որ վերջինս դրսեւորում է ոչ ադեկվատ վարքագիծ, երթեւեկում է՝ արագությունը գերազանցելով, երթեւեկության կանոնների խախտմամբ, պահանջել է կանգնեցնել ավտոմեքենան, որպեսզի ինքն իջնի: Նշված կինն ասել է, որ իր տղային առանց իրեն հարցնելու տարել եւ սպանել են, ինքը կորցնելու ոչինչ չունի, կարող է նրան սպանել, ուստի, առանց հարցնելու իրեն, տանում է Եռաբլուր, որտեղ, իր էմոցիաներից ելնելով, կորոշի՝ազատ թողնել, թե ոչ: Հասնելով «Ծերեթելիի» խաչմերուկի մոտակայքում գտնվող սուպերմարկետի մոտ՝ օգտվելով կնոջ կողմից ավտոմեքենայի արագությունը դանդաղեցնելու հանգամանքից, ինքն արագորեն բացել է ավտոմեքենայի առջեւի աջ դուռը եւ իրեն ընթացքի ժամանակ դուրս նետել:

Դրանից վայրկյաններ հետո, երբ կանգնած է եղել, սպիտակ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան հարվածել է իրեն: Շրջվելով նկատել է, որ նշված ավտոմեքենայի վարորդը եւ ուղեւորները դատարանի մոտ կանգնած ծնողներն են: Ելնելով իր անվտանգությունից՝անմիջապես մտել է սուպերմարկետի տարածք», -նշվում էր մայիսի 17-ին երեկոյան ՔԿ-ի տարածած հաղորդագրության մեջ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 3-ից 5-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 115 դեպք, որոնցից 9-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

2 ԴՊՐՈՑ՝ 147 ՀՈԳՈՒՆ

Դիլիջան համայնքի Գոշ գյուղում գործում է հանրակրթական երկու դպրոց՝ հիմնական եւ միջնակարգ: Ըստ Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքի՝ Գոշի հիմնական դպրոցն ունի 28, միջնակարգ դպրոցը՝119 աշակերտ: Ընդամենը 147 աշակերտի համար մոտ 1100 բնակիչ ունեցող գյուղում երկու դպրոց է պահվում, պետական բյուջեից մեծ ծախսեր են կատարվում:

ՄԱՐԶՊԵՏԸ ԹԱՔՑՆՈՒՄ Է

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանի կենսագրականում, որը հրապարակված է Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքում, նշում չկա Հայկ Ղալումյանի կուսակցական պատկանելիության մասին, մինչդեռ Հայկ Ղալումյանը շարքային կուսակցական չէ, նա իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վերահսկող հանձնաժողովի նախագահն է:

ՂԵԿԱՎԱՐԸ ՏՈՒԳԱՆՎԵՑ

Իջեւանի համայնքապետարանը պայքարում է ինքնակամ բացօթյա առեւտուր իրականացնողների դեմ: Իջեւան քաղաքի Երեւանյան փողոցի 96 հասցեում քաղաքացի Լյուբա Ստեփանյանի կողմից առանց թույլտվության, ինքնակամ իրականացվել է բացօթյա առեւտուր, որի վերաբերյալ համայնքապետարանի աշխատակիցների կողմից 2023թ. մայիսի 15-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, կատարվել է լուսանկարում: Իջեւանի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առեւտրի, սպասարկման եւ գովազդի բաժնի պետ Արարատ Պարոնյանը այդ արձանագրությունը՝ կից զեկուցագրով եւ լուսանկարներով, ներկայացրել է Իջեւան համայնքի ղեկավարին՝ իրավախախտին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Հիմք ընդունելով այդ զեկուցագիրը եւ կից ներկայացված նյութերը՝ վարչական իրավախախտում կատարելու փաստի առթիվ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով, համայնքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ, եւ վարույթի քննության ժամկետ է նշանակվել 2023թ. մայիսի 31-ը՝ժամը 11:00-ն: Լյուբա Ստեփանյանը այդ լսումներին չի մասնակցել: Հունիսի 1-ին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը որոշում է կայացրել Լյուբա Ստեփանյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք (տույժ)՝ 50 հազար դրամի չափով, նրան պարտավորեցնել դադարեցնել ինքնակամ առեւտուրը, նրան պարտավորեցնել նաեւ տուգանքի մասին որոշումը ստանալուց ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում տուգանքը կամավոր վճարել համայնքապետարանի գանձապետական համապատասխան հաշվին, սույն որոշումը եռօրյա ժամկետում, առձեռն կամ փոստային առաքմամբ, ստացումը հավաստող հետադարձ ծանուցմամբ իրազեկել Լյուբա Ստեփանյանին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ

ՀԱՅՏԱԳՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ ՏՐՎԵՑ

ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կմեկնարկի հունիսի 12-ից եւ կիրականացվի 3 փուլով:

Այս տարի եւս հայտագրման գործընթացն իրականացվելու է ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից վարվող «Սովորողներին դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգի» միջոցով:

Առաջին փուլով՝ հունիսի 12-ից հայտագրումը բաց կլինի բոլոր այն քաղաքացիների համար, որոնք ունեն որոշակի արտոնություններ:

ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2010թ. նոյեմբերի 24-ի N 1640-Ն հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու եւ ազատելու կարգի» համաձայն՝ սովորողների ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթություն տրվում է՝

- տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին եւ տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին (այս կետի արտոնությամբ հայտագրումը կշարունակվի մինչեւ հունիսի 25-ը ներառյալ),
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ տվյալ դպրոցից մինչեւ տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվող՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված ընտանիքների, խնամակալության տակ գտնվող, հաշմանդամություն ունեցող կամ հաշմանդամություն ունեցող ծնողների երեխաներին,
- տվյալ ոլորտային օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ տարածքում ներքին գործուղման հետեւանքով առնվազն 6 ամիս ժամկետով այլ բնակավայր տեղափոխված պետական համակարգի աշխատողների երեխաներին:

Վերջին երկու կետերի դեպքում ժամկետային սահմանափակում չի գործում, եւ համապատասխան հիմքերի առկայության դեպքում ծնողը դիմում է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ երեխային հաստատություն ընդունելու համար:

Վերը նշված արտոնություններից կարող են օգտվել ինչպես հայերենով, այնպես էլ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում հայտագրվողները:

Երկրորդ փուլով՝ հունիսի 27-ից առաջին դասարանցիների հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցում իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր առաջին դասարանցիների ընդունելության համար:

Երրորդ փուլով՝ հուլիսի 4-ից հայտագրում կիրականացվի նաեւ օտարերկրյա քաղաքացիների, երկքաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (նրանց օրինական ներկայացուցչի) համար: Այն դեպքում, երբ ծնողներից մեկը թվարկված որեւէ խմբի ներկայացուցիչ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, հայտագրումը կարող է կատարվել ծնողի ընտրությամբ՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում:

Ազգային փոքրամասնությանը պատկանող սովորողի ընդգրկումը դպրոց կատարվում է սովորողի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում (դասարանում), իսկ դրա բացակայության դեպքում ուսուցման լեզվի ընտրությունը կատարում է սովորողի ծնողը:

Հայտագրումը կշարունակվի ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Նշենք, որ երկյակ, եռյակ, քառյակ եւ ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որեւէ հանրակրթական ուսումնական հաստատությունում ապահովում է մյուս երեխաների ընդունելությունը նույն հաստատություն՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի սահմանափակումից:

Հավելենք, որ, որպես հայտագրման առաջին քայլ, նախ պետք է ստուգել երեխայի տվյալների ամբողջականությունը: Այս նպատակով ԿՏԱԿ-ը գործարկել է https://stugu2.e2is.a2/ կայքը, որտեղ դպրոց ընդունվող երեխայի ծնողները կարող են ստուգել երեխայի անձնական տվյալների առկայությունն ու ճշգրտությունը: Այս քայլն անհրաժեշտ է՝ բուն հայտագրման գործընթացը սկսելու եւ հնարավոր խնդիրներից խուսափելու համար:

ԱԳՆ

ՃԱՆԱՉԵԼԸ՝ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կողմից Ադրբեջանը՝ 86.6 f/կմ մակերեսով, իսկ Ադրբեջանի կողմից Հայաստանը 29.8 f/կմ մակերեսով ճանաչելը քաղաքական հայտարարություններ են. այս մասին հունիսի 5-ին՝ ԱԺ-ում 2022 թվականի բյուջեի կատարողականի զեկուցման ժամանակ, պատասխանելով «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանի հարցին, ասաց ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

Մանուկյանը հետաքրքրվեց՝ արդյոք ՀՀ-ն որեւէ այլ երկրի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելիս, տարածքային ամբողջականությունը ճանաչելիս այդ երկիրը մակերեսով ճանաչել է, թե ոչ: Նա նկատեց, որ իշխանությունն ամեն օր բարձրաձայնում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության մակերեսը, եւ փորձեց Միրզոյանից պարզաբանում ստանալ՝ արդյոք Ադրբեջանի որեւէ պաշտոնյա հստակ ասել է «ՀՀ տարածքը 29.8 քառակուսի կմ է» արտահայտությունը:

«Որեւէ երկրի փոխադարձ ճանաչման, դիվանագիտական հարաբերությունների հաստատման պայմանագրում չկա մակերեսի հիշատակում: Ենթադրում եմ, որովհետեւ բոլորը չեմ կարդացել: Հայաստանի դեպքում 29.8 ք/կմ մակերեսը, իսկ Ադրբեջանի դեպքում 86.6 ք/կմ-ը քաղաքական հայտարարություններ են: Սրանք այն մասին են, որ Հայաստանը չունի տարածքային պահանջ Ադրբեջանից, իսկ Ադրբեջանը չունի տարածքային պահանջ Հայաստանից այն մակերեսով ու այն սահմաններով, որոնք եղել են Խորհրդային Միության մաս կազմող երկու սոցիալիստական հանրապետության համար»,- ասաց Միրզոյանը:

Նա շեշտեց, որ Մանուկյանը ճիշտ է նկատել՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հրապարակավ չի ասել, որ ճանաչում է ՀՀ տարածքային ամբողջականությունը 29.8 ք/կմ տարածքով: ԱԳ նախարարը վստահեցրեց՝ ԵԽ նախագահ Շառլ Միշելի հայտարարությունից հետո, որի միջնորդությամբ հանդիպում էր տեղի ունեցել, եւ որին ներկա է եղել նաեւ Իլհամ Ալիեւը, որեւէ հրապարակային հերքում էլ չի եղել:

Նա հույս հայտնեց, որ Ադրբեջանի բարձրագույն իշխանությունն առաջիկայում հրապարակավ հանդես կգա ՀՀ տարածքային ամբողջականության ճանաչմամբ:

«Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը նշեց, որ երբ կառավարության կողմից անընդհատ շեշտվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականության 86,6 քառակուսի կմ-ը, դրանով արդեն կանխորոշում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը՝ առանց դրա համար ունենալով ԼՂ իշխանությունների արտոնությունը:

Հիշեցնենք՝ մայիսի 22-ին լրագրողների հետ հանդիպմանը Փաշինյանը հստակեցրեց, թե ինչ է նշանակում՝ Հայաստանը ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը 86,6 հազար քառակուսի կմ տարածքով, եւ հայտարարեց՝ Ադրբեջանի 86,6 հազար քառակուսի կմ տարածքը ներառում է նաեւ Լեռնային Ղարաբաղը: Նա ասաց նաեւ, որ Հայաստանի 29 800 քառ. կմ տարածքային ամբողջականության մեջ Արարատի մարզի Տիգրանաշեն համայնքը եւ Տավուշի 6 գյուղերը չեն ներառվում:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 50 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 59-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ԱՃ՝ «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ»-ՈՒՄ

Հայաստանի լիզինգային շուկայի բացարձակ առաջատար «Ակբա Լիզինգ»-ը մասնագիտացված Leasing Expo 2023-ին ներկայացնում է ոլորտի լավագույն առաջարկները:

Leasing Expo 2023-ին մասնակից ընկերությունների մեծամասնությունը Հայաստանում առաջին լիզինգային կազմակերպության՝ «Ակբա Լիզինգ»-ի երկար տարիների գործընկերներն են, որոնք ցուցահանդեսին ներկայացնում են նորարարական լուծումներ եւ ժամանակակից տեխնիկա՝ գյուղատնտեսական սարքավորումներից մինչեւ արեւային պանելներ, տրանսպորտային միջոցներ ու շինտեխնիկա:

«Leasing Expo 2023-ը եւս մեկ լավ հնարավորություն է բիզնես ոլորտի ներկայացուցիչներին հանդիպելու եւ մտքեր ու գաղափարներ փոխանակելու համար: Արդեն 20 տարուց ավելի է՝ շուկայում ենք եւ ունենք բազմաթիվ գործընկերներ ու հաճախորդներ, որոնք այս ամբողջ ընթացքում մեզ հետ են եղել, ու միասին ենք առաջ շարժվում: Մեր գործընկերներից գրեթե բոլորը, որոնք մեկ անգամ մեզ հետ գործընկերային հարաբերություն են սկսում, հետո դառնում են մեր մշտական գործընկերը: Վերջին 4 տարում «Ակբա Լիզինգ»-ի պորտֆելը քառապատկվել է եւ ներկա պահին կազմում է 70 միլիարդ դրամ: 2023-ին կնքված պայմանագրերով այն կկազմի 100 միլիարդ դրամ: Նշեմ, որ 2022 թվականին Հայաստանի լիզինգային շուկայի ամբողջ պորտֆելն է կազմել շուրջ 100 միլիարդ դրամ»,- նշել է «Ակբա Լիզինգ»-ի գլխավոր տնօրեն Աղասի Գասպարյանը:

«Ակբա Լիզինգ»-ն արդեն 20 տարի տնտեսության իրական հատվածում լայնածավալ ներդրումներ է իրականացնում եւ տարեցտարի գրանցում ռեկորդային աճ:

«Ակբա Լիզինգ»-ը ակտիվորեն մասնակցում է նաեւ պետության կողմից սուբսիդավորվող ծրագրերին, նպաստում երկրի տնտեսության բոլոր ոլորտների զարգացմանը՝ սահմանամերձ գոտիներում գտնվող փոքր տնտեսություններից մինչեւ տնտեսության շարժիչ ուժ համարվող ՓՄՁ-ներ:

«Ակբա Լիզինգ»-ի 100% բաժնետերը «Ակբա» բանկն է:

«Ակբա Լիզինգ»-ը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԱՎԱՐՏՎԵՑ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՍԱՄԱՐԱԹՈՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեւանում եւ եւս 5 երկրի 84 քաղաքում միաժամանակ անցկացվել է One Run միջազգային կիսամարաթոնը:

Հայաստանն առաջին անգամ է միացել այս նախաձեռնությանը: One Run-ի մեկնարկն ու վերջնարկը տրվել է Հանրապետության հրապարակում, իսկ երթուղին ընդգրկել է Երեւանի Նալբանդյան, Աբովյան, Տերյան, Իսահակյան եւ մի շարք այլ կենտրոնական փողոցները:

Մրցաշարին հետեւել եւ հաղթողներին պարգեւատրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը:

«Նմանօրինակ մրցաշարի անցկացումը վկայությունն է այն բանի, որ Հայաստանում մասսայական սպորտը բավական լավ տեղաշարժ ունի եւ վերելք է ապրում: Վստահ եմ՝ մոտ ապագայում մենք մասսայական սպորտի միջազգային լուրջ մրցաշարեր կունենանք: Ինքներս էլ որոշել ենք միջազգայնացնել «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավազքի եւ լողի մրցաշարերը: Բոլորիդ կոչ եմ անում մասնակցել նաեւ այդ մրցաշարերին, որոնք առողջ ապրելակերպի գրավականն են: Բոլոր նրանք, ովքեր դուրս եկան մեկնարկ, քայլ արեցին դեպի ավելի առողջ կյանք: Շնորհավորում եմ բոլոր մրցանակակիրներին եւ նորանոր հաջողություններ մաղթում»,- ասել է Կարեն Գիլոյանը:

One Run միջազգային մրցաշարի շրջանակում 0-12 տարեկան մասնակիցները հաղթահարել են 1 կմ, 13 տարեկան եւ բարձր մասնակիցները՝ 5 կմ, 16 տարեկան եւ բարձր մասնակիցները՝ 10 կմ, իսկ 18 տարեկան եւ բարձր մասնակիցները՝ 21,1 կմ վազքատարածությունը:

Տղաների պայքարում 21.1 կմ մրցատարածությունն առաջինը հաղթահարել է Դմիտրի Կորոլեւը Վանաձորից՝ գրանցելով 1 ժամ 16 րոպե 36 վայրկյան արդյունք: Երկրորդ տեղը զբաղեցրել է Նարեկ Պետրոսյանը 1:27:15 արդյունքով, իսկ լավագույն եռյակը եզրափակել է Բաբկեն Գեւորգյանը (1:31:06):

Դմիտրի Կորոլեւը շնորհակալություն է հայտնել կազմակերպիչներին հնարավորության համար՝ շեշտելով, որ երկար նախապատրաստվել են մրցմանը. «Սա միանշանակ տոն էր, որը վայելեցինք: Երթուղին եւս հիանալի էր՝ քաղաքի կենտրոնական փողոցներով ու տեսարժան վայրերով: Ես ինքս ապրում եմ Վանաձորում, ու երեւանյան կոլորիտը զգալն արդեն իսկ հիանալի էր ինձ համար: Շատ հետաքրքիր էր: Մտածում էի՝ բարդ կլինի, բայց հանդիսատեսի ոգեւորությունն ու աջակցությունը շատ օգնեցին: Հաջորդ նպատակս հոկտեմբերին Երեւան մարաթոնին մասնակցելն ու ավելի լավ արդյունք գրանցելն է»:

Աղջիկների պայքարում կիսամարաթոնի հաղթողի կոչմանն արժանացել է Քնար Աբրահամյանը, որը 21.1 կմ մրցատարածությունը հաղթահարել է 1:41:19 ժամանակում: Երկրորդ տեղը զբաղեցրել է Կարինա Բաղդասարյանը՝ 2:04:16 արդյունքով, լավագույն եռյակը եզրափակել է Նաիրա Մարգարյանը (2:10:49): Քնար Աբրահամյանը մասնագիտությամբ երաժիշտ է, ապրում է ԱՄՆ-ում, իսկ Հայաստանում առաջին անգամ է մրցաշարի մասնակցում. «Շատ ուրախ եմ հաղթանակի համար: Իհարկե, շատ շոգ էր, բայց ադրենալինն այնքան մեծ էր, որ ոչ մի դժվարություն չէր կարող խանգարել: Սպորտով զբաղվում եմ սիրողական մակարդակում, ԱՄՆ-ում նաեւ մարաթոնյան վազքի մրցաշարի եմ մասնակցել ու հաղթող ճանաչվել՝ հաղթահարելով 42 կմ մրցատարածությունը»:

Մրցաշարի հաղթողներից էր նաեւ Լիլիթ Հարությունյանը, որն ուժերն է փորձել կանանց 5 կմ մրցատարածությունում ու դարձել ոսկե մեդալակիր: Լիլիթը «ՀՀ վարչապետի գավաթ» մրցաշարերի մշտական մասնակիցներից ու սիրողական խճուղային հեծանվավազքի այս տարվա հաղթողներից է. նա ընդամենը 2 ամիս առաջ է մայրացել:

«Այս մեդալն ինձ շատ է ոգեւորել, եւ հուսով եմ՝ կնպաստի հետագա հաջողություններ գրանցելու համար: Մարզվում եմ այն ժամանակ, երբ բալիկս քնած է: Ամուսինս շատ է օգնում ինձ: Մեծ աղջիկս էլ է զբաղվում աթլետիկայով ու այսօր եւս հաղթող ճանաչվեց 1 կմ վազքում: Կարելի է ասել՝ սպորտային ընտանիք ենք ու միմյանց օգնելով՝ կարողանում ենք հաջողությունների հասնել»,- ասում է Լիլիթ Հարությունյանն ու ընդգծում՝ առաջիկայում նախատեսում է մասնակցել «ՀՀ վարչապետի գավաթի» սիրողական խճուղավազքի մրցաշարին:

One Run-ի մրցանակակիրները պարգեւատրվել են մեդալներով, շապիկներով, վկայականներով եւ խրախուսական նվերներով:

Միջոցառումն անցկացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության, «Արմ Մարաթոն» հիմնադրամի, «Հերոսների մրցավազք» ինքնավար ոչ առեւտրային կազմակերպության աջակցությամբ: Միջոցառման շահառուն եւ բարեգործական գործընկերն է «Շտապի՛ր դեպի բարին» հիմնադրամը:

One Run կիսամարաթոնը 7 տարի շարունակ անցկացվել է միայն Ռուսաստանում եւ երկու անգամ ընդգրկվել է Գինեսի ռեկորդների գրքում՝ որպես համաժամանակյա մեկնարկով ամենախոշոր կիսամարաթոն:

ԼՈՒՐԵՐ

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԱՃ

2023 թվականի մայիսի 1-31-ը «Պատմամշակութային արգելոց-թանգարանների պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տոմսային եւ ոչ տոմսային արգելոցներ եւ արգելոց-թանգարաններ է այցելել ընդհանուր 85 076 տեղացի եւ օտարերկրացի զբոսաշրջիկ:

2022 թվականի նույն ժամանակահատվածում «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի արգելոցներ է այցելել 67 163 զբոսաշրջիկ:

Այսպիսով, 2023-ի մայիսին ՊՈԱԿ-ի մասնաճյուղ արգելոցները եւ արգելոց-թանգարանները այցելությունների թվի 22 տոկոս աճ են գրանցել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

ՏՐՈԼԵՅԲՈՒՄՆԵՐԸ ՀԱՍԱՆ

15 նոր տրոլեյբուսներից 12-ն արդեն Երեւանում են: Այս մասին նշվեց հունիսի 5-ի Երեւանի քաղաքապետարանում հերթական գործակարգավարական նիստի ժամանակ: Թե նոր տրոլեյբուսները երբ շահագործման կհանձնվեն, առայժմ հայտնի չէ, սակայն քաղաքային իշխանությունները հերթական մրցույթն են հայտարարել տրոլեյբուսների նոր խմբաքանակի գնման համար:

Ավելի վաղ հաղորդվել էր, որ Երեւանի քաղաքապետարանն իր միջոցներով ձեռք է բերել 15 նոր տրոլեյբուս, եւս 15 տրոլեյբուս ձեռք կբերի ՀՀ կառավարության աջակցությամբ:

Այժմ աշխատանքներ են տարվում մայրաքաղաքի տրանսպորտային պարկի թարմացման ուղղությամբ:

Մայրաքաղաքի բնակիչներին մինչեւ տարեվերջ կսպասարկեն 87 MAN մակնիշի ավտոբուսներ (105 նստատեղ) եւ 150 հատ 8,6 մետր երկարությամբ Zhong Tong ավտոբուսներ (60 նստատեղ):

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼՆ ԱՎԱՐՏՎԵՑ

2024թ. «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի առաջադրումների փուլն այժմ ավարտված է: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին «Ավրորա» հիմնադրամի գրասենյակից: Այս մրցանակը շնորհվում է Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից՝ ի երախտագիտություն նրանց փրկողների: «Ավրորա» մարդասիրական նախաձեռնությունը 2024թ. մրցանակի առաջադրումների փուլն սկսել էր դեռ 2022 թ. հունիսի 1-ից՝ կոչ անելով համայն մարդկությանն առաջադրելու մեր օրյա հերոսների: Ընդհանուր ստացվել է 730 հայտ 74 երկրից, այդ թվում՝ ԱՄՆ-ից, Քենիայից, Հայաստանից, Նիգերիայից, Գերմանիայից, Պակիստանից, Կանադայից, Հնդկաստանից, Մեծ Բրիտանիայից, Չեխիայից, Վրաստանից եւ Իրանից: Մրցանակի համար առաջադրվել է 676 եզակի թեկնածու:

«Կյանքում ինձ բախտ է վիճակվել հանդիպելու եւ ճանաչելու այնպիսի մարդկանց, որոնք, հավատարիմ իրենց հանձնառությանը, մշտապես ձգտում են օգնել մարդկանց: Եվ ես գիտեմ, որ ճանաչման արժանանալը կարող է վճռորոշ լինել՝ հնարավորություն տալով նրանց շարունակելու մարդկանց փրկելու նվիրական գործը: Անհամբեր սպասում եմ, թե երբ եմ հանդիպելու 2024 թ. «Ավրորայի» հերոսներին եւ դափնեկրին», - ասաց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության նախագահ եւ 2017 թ. «Ավրորա» մրցանակի դափնեկիր Թոմ Քաթինան:

Մարդասիրության ոլորտի մասնագետներից կազմված «Ավրորա» մրցանակի փորձագետների խորհուրդը մանրամասն կուսումնասիրի բոլոր հայտերը եւ կկազմի վերջնացուցակ, որն էլ կներկայացնի «Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովին: Հանձնաժողովի անդամներն արդեն կընտրեն 2024 թ. «Ավրորայի» հերոսներին, իսկ հետո՝ «Ավրորա» մրցանակի դափնեկրին:

«Ուրախ եմ, որ «Ավրորան» շարունակում է միջոցներ տրամադրել աշխարհին՝ ճանաչելու եւ հարգանքի տուրք մատուցելու մարդասերներին՝ օգնելով նրանց կապ հաստատել միմյանց հետ եւ միասին պայքարել ընդդեմ բռնության եւ անարդարության»,- նշեց «Նուռ» կրթության եւ կարողությունների զարգացման կազմակերպության (NECDO) հիմնադիր, 2022 թ. «Ավրորա» մրցանակի դափնեկիր Ջամիլա Աֆղանին:

«Ավրորա» մրցանակի դափնեկրի անունը հայտնի կդառնա 2024 թ. գարնանը: Նա կստանա 1.000.000 ԱՄՆ դոլար պարգեւ եւ եզակի հնարավորություն շարունակելու նվիրատվության շղթան՝ աջակցելով կազմակերպությունների, որոնք օգնում են կարիքի մեջ գտնվողներին:

«Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի առաքելությունն է ճանաչման արժանացնել եւ աջակցել նրանց, ովքեր վտանգի են ենթարկում սեփական կյանքը, առողջությունը կամ ազատությունը, որպեսզի փրկեն այն մարդկանց կյանքը, առողջությունը կամ ազատությունը, որոնք տառապում են հակամարտությունների, մարդկության դեմ իրագործվող հանցագործությունների կամ մարդու իրավունքների այլ լուրջ խախտումների հետեւանքով: «Ավրորա» մրցանակի դափնեկիրն ընտրվում է՝ ըստ ցուցաբերած խիզախության, նվիրումի եւ ունեցած ազդեցության:

«Ավրորա» մրցանակի ընտրող հանձնաժողովի կազմում ընդգրկված են Նոբելյան դափնեկիրներ Շիրին Էբադին եւ Լեյմա Գբովեն, Իռլանդիայի նախկին նախագահ Մերի Ռոբինսոնը, մարդու իրավունքների ակտիվիստ Հինա Ջիլանին, Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի նախագահ Լուիզ Ռիչարդսոնը, Մեքսիկայի նախկին նախագահ Էռնեստո Սեդիլյոն, լրագրող, Պուլիցերյան մրցանակի դափնեկիր Դելե Օլոջեդեն, Unilever ընկերության նախկին գլխավոր գործադիր տնօրեն, IMAGINE կազմակերպության համահիմնադիր եւ համանախագահ Փոլ Փոլմանը եւ մարդու իրավունքների ակտիվիստ եւ The Sentry նախաձեռնության համահիմնադիր Ջոն Փրենդերգասթը: Հանձնաժողովը նախագահում է Լոնդոնի կայսերական քոլեջի Գլոբալ առողջապահական նորարարությունների ինստիտուտի համաղեկավար Լորդ Արա Դարզին: Պատվավոր համանախագահն է օսկարակիր դերասան, մարդասեր Ջորջ Քլունին:

Մենք հարգում ենք ընտրող հանձնաժողովի առաջին համանախագահ, Մարդասիրության «Էլի Վիզել» հիմնադրամի նախագահ, Նոբելյան դափնեկիր Էլի Վիզելի (1928-2016 թթ.), «Ավրորայի» համահիմնադիր, ընտրող հանձնաժողովի անդամ Վարդան Գրեգորյանի (1934-2021 թթ.), խաղաղության եւ մարդու իրավունքների հայտնի ակտիվիստ, ընտրող հանձնաժողովի պատվավոր համանախագահ Բենջամին Ֆերենցի (1920-2023 թթ.) հիշատակը:

ԲՐՅՈՒՍՈՎ

ԹԵԺ ԿՐՔԵՐ՝ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՈՒՐՋ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ահազանգեր է ստացել Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ուսանողուհի Մանե Արշակյանից:

Ըստ նրա՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Գյուրջինյանն իր վարչական կազմով արշավ է սկսել այն ուսանողների դեմ, որոնք համակարծիք չեն իրենց հետ, եւ համալսարանի ուսանողական խորհուրդը համալրում են իրենց համակիր ուսանողներով, ինչը մեծ դժգոհություններ է բարձրացրել համալսարանում:

Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի շուրջ կատարվող լարված իրավիճակի հետ կապված պարզաբանումների մասով «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Գյուրջինյանի հետ, սակայն վերջինս որոշեց, որ հաճելի ձայն չէ իր համար, եւ առանց լսելու մեր կողմից հնչեցվող հարցադրումները անջատեց հեռախոսը:

Նշենք, որ մարտի 15-ին Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանը նշանակվեց Բրյուսովի անվան համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար: Սակայն, ի հակադրություն Դավիթ Գյուրջինյանի նշանակման, ուսանողները տեւական ժամանակ դասադուլ էին հայտարարել:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՎԵՐՀԻՇԵԼՈՎ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ



Դերասանուհի Անաիս Սարդարյանը, որն ակտիվ գործունեություն է ծավալում «Ինստագրամ»-ում եւ ակտիվորեն իր հետեւորդների հետ կիսվում է ոչ միայն աշխատանքային, այլ նաեւ երեխաների առօրյայով, հետաքրքիր գրառում է կատարել՝ վերհիշելով իր մանկությունը:

ՀԱՂԹԱՆԱԿ՝ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՑ

Պատանի հայ բռնցքամարտիկները հաղթանակով են մեկնարկել Ղազախստանում ընթացող միջազգային մրցաշարում, որին մասնակցում են Հայաստանի Ղազախստանի, Ղրղզստանի, Ուզբեկստանի, Չինաստանի, Մոնղոլիայի եւ Ռուսաստանի բռնցքամարտիկները: Իրենց մեկնարկային մենամարտերում հաղթանակ են տոնել 46 կգ քաշային Վահրամ Դովլաթբեկյանն ու 54 կգ քաշային Վազգեն Քարհանյանը: Հայաստանը մրցաշարին ներկայացված է 5 բռնցքամարտիկով:

ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԻՍԱՊԱՇՏՊԱՆԸ

«Կրասնոդարի» եւ Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանը ճանաչվել է Ռուսաստանի Պրեմիեր լիգայի ավարտված մրցաշրջանի լավագույն կիսապաշտպան. հաղորդում է մրցաշարի մամուլի ծառայությունը:

Ռուսաստանի ավարտված առաջնությունում Էդուարդ Սպերցյանը մասնակցել է 28 հանդիպման, կատարել 12 գոլային փոխանցում: Նա խփել է 10 գոլ եւ ռմբարկուների ցուցակում գրավել 7-րդ տեղը:

«Կրասնոդարը» 48 միավորով գրավել է 6-րդ տեղը:

Սպերցյանի պայմանագիրը «Կրասնոդարի» հետ նախատեսված է մինչեւ 2026 թվական: Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 9 միլիոն եվրո:

● *Հունիսի 7-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Հարսնացու հյուսիսից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

ՀԱՐՑ. Տանս վկայականը կորցրել եմ: Ինչպե՞ս կարող եմ կրկնօրինակը ստանալ:

Էմմա Քյարամյան (44 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. 2019 թվականի հուլիսի 1-ից հետո վկայականի կրկնօրինակ չի տրամադրվում, այլ վկայականը փոխարինվում է նոր գրանցման վկայականով՝ պետական գրանցման իրական ամսաթվի վերաբերյալ նշումով:

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մինչեւ 2019 թվականի հուլիսի 1-ը տրամադրված գրանցման վկայականը նոր գրանցման վկայականով փոխարինվում է դրա համար դիմումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ներկայացվելու օրվանից 2-րդ աշխատանքային օրը, որի համար վճար չի գանձվում:

ԷՋԸ՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Նախարարությունը անասնաբուծության ոլորտում ի՞նչ ծրագրեր է իրականացնում:

Արտակ Հայրապետյան (54 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Այս տարի նախարարությունը մեկնարկել է երկու ծրագիր՝ուղղված անասնաբուծության ոլորտի զարգացմանը: Դրանք են «Փոքր եւ միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» եւ «ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագրերը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առաջին ծրագրի շրջանակում պետությունը փոխհատուցում է «խելացի» անասնաշենքերի կառուցում կամ վերակառուցում իրականացրած շահառուների ծախսերը: Երկրորդի դեպքում հնարավորություն է ընձեռվում ընդամենը 2% տարեկան տոկոսադրույքով սուբսիդավորվող վարկով ձեռք բերել բարձր մթերատու տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեկ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում կայացավ Գայանե Մարտիրոսյանի խափանման միջոցը փոխելու դատական նիստը: «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսեց, որ դատարան էին «բերվել» Պետական պահպանության ծառայության աշխատակիցները, որոնք նաեւ խորհրդարանում հայրենի իշխանությունների անվտանգությունն են ապահովում: Դատարան պետք է ներկայանար ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որդին՝ Աշոտ Փաշինյանը, ինչի համար ողջ ՊՊԾ խումբը տեղափոխվել էր դատարանի մուտքի մոտ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 +20 + 24
Կոտայքի լեռներ	+ 8 + 11 +20 + 23
Կոտայքի նախալեռներ	+17 + 19 +24 + 26
Գեղարքունիք	+ 7 + 13 +18 + 21
Լոռի	+11 + 16 +21 + 26
Տավուշ	+14 + 18 +25 + 29
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+15 + 19 + 26 + 30

Արարատ	+18 + 20 +30 + 32
Արմավիր	+17 + 19 +27 + 29
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +19 + 22
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +25 + 28
Սյունիքի հովիտներ	+18 + 21 +27 + 31
Սյունիքի նախալեռներ	+10 + 15 +21 + 24
Արցախ	+18 + 21 +27 + 31
Երեւան	+17 + 19 +29 + 31

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **5.6.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*